Թաթիկներից մինչև ձեռք (ծածկանունը՝ Երանի)

Ահա խաչվեցին ճերմակ ափերը՝ մեղքը թաքցնելով մթության մեջ, և հեղհեղուկ ապաշխարանքը հոգումս՝ աչքերս ուղղեցի խորանին: Այնտեղ գույներ էին, որ հավերժ քնել էին սառը կտավին: Անշարժացած Աստվածամոր աչքերում վարարել էր ներումը, իսկ նրա վարդ ձեռքերում քնած էր աստվածային մանուկը: Աչքերս փակեցի և իմ առջև ծավալվեց մթությունը: Նեղ միջանցքի մի կողմում համատարած անտեսություն էր, իսկ զուգահեռ կողմում՝ երկար ձգվող ճաղավանդակներ:

Տեսնում էի ճաղերից ամուր կառչած ձեռքեր, մարդիկ, որ անուններ ունեն՝ մոռացված հաճախ, անուններ, որոնց բարձրաձայնումը արձագանքում է ամոթով խարանված:

Ես մոտեցա, խորշանքով շոշափեցի անծանոթի ձեռքերը. դրանք սևացել էին, իսկ բութ մատի հատվածում ինչ-որ պատկեր էր դաջված: Մթության մեջ կռացա և հոտ քաշեցի ձեռքերից, հոտը հեռվից էր գալիս:

-Ձեր ձեռքերից համբույրների հոտ է գալիս: Ձեր մայրը հաճախ է դրանք առել իր խաղաղ ափերում և անվերջ համբույրներ դաջել նրանց փափուկ ճերմակությանը: Թաթիկները անկանոն շարժում էիք, նրանց յուրաքանչյուր հպումից անմեղություն էր ճառագում: Դուք վախենում էիք ու լալիս, և հանգստանում միայն նրա գրկում: Դուք ճանաչում էիք նրա բույրը, հիշում նրա աչքերը, հասկանում նրա օրորոցայինը: Եվ ձեր միակ գիտակցական շարժումը ձեր թաթիկների մեկնումն էր դեպի նա: Մայրը չէր հապաղում և անմիջապես իր այտն էր մոտեցնում դեպի իրեն լողացող ճերմակ ամպիկին: Թաթիկը գգվում էր նրան, և թվում էր՝ ամպիկը գտել է երկնքի՝ իրեն պատկանող կապույտը: Ես հասկանում եմ Ձեզ, անհնար է մեծանալ, աճել և ձեռքերի փոխարեն թաթիկներ ունենալ: Դա բնությանը հակառակ կլիներ և ոչ հարմար:

Ես այնտեղ էի, տեսել եմ այն այտերը, նրանք սառն էին, մարմարե արձանի պես հարթ: Այտերի վրա ամենուր Ձեր թաթիկների հետքերն էին: Նա տարավ նրանց իր հետ ընդմիշտ և հեռու:

Դուք գիտե՞ք, թե ինչքան թանկ բան կար դրված այդ թաթիկներում: Նրանց կնճռոտված, փխրուն և լուսավոր գոյության մեջ Ձեր մոր հույսերն էին: Արևագալից արևամուտ ընկած ժամանակի յուրաքանչյուր վայրկյան նա իր երազանքներն էր դնում թաթիկների մեջ, իր երջանկության գանձանակը լցնում և համբույրները որպես կնիք դնում նրանց վրա: Դուք կոտրել եք գանձանակը: Ձեր ափերում պահված երազները շաղ տվեցիք ոտքերի տակ, տրորեցիք ձեզ:

Ես բաց թողեցի նրա ձեռքերը, նստեցի հատակին՝ մեջքս հենելով սառը պատին: Նա հետևեց ինձ. այժմ իմ առջև ծալապատիկ նստած նրա աղոտ պատկերն էր: Ես շարունակեցի.

-Իմ խոսքերի պատճառը եսասիրությունն է, նպատակակետը՝ եսապաշտությունս: Մարդիկ սահմանափակում են միմյանց: Ինձ երկար ժամանակ թվում էր, որ ես վախենում եմ մթությունից, մինչդեռ ես վախենում էի այնտեղ Ձեզ հանդիպել: Չգիտեմ Ձեր անունը, Ձեր դեմքն էլ չեմ տեսնում նույնիսկ հիմա…Իսկ դուք գիտե՞ք,թե դաժանության սանդղակի որ հատվածում կգտնվեր ձեր արարքը, եթե հանդիպեինք:

Նա մեկնեց ինձ ձեռքը:

-Ձմեռ է դրսում: Այս տարի մեկ-երկու անգամ առատ ձյուն տեղաց: Լուռ ու անշշուկ ծածկեց գետինը: Մեր փողոցում շատ լուսարձակներ կան, ձմռանը դրանցից լույսի ցոլքեր են հոսում ձյան վրա, մեղրագույն լույսի արտացոլանքը հասնում է անաստղ երկինք: Շատ էի ուզում այս ձմեռ գեթ մեկ անգամ ուշ գիշերին, երբ ցերեկը սկսվում էր երկրից, քայլել դատարկ փողոցում, ուր լռությունն անգամ վայելում էր ձյան փափկությունը:

Նա հարցական ինձ նայեց: Ես հասկացա նրա չբարձրաձայնված հարցը.

-Իսկ եթե Դուք այնտեղ լինեիք…Դուք պարզել եք ինձ Ձեր ձեռքը, որի ճակատագրի գծերում դեռ տեսնում եմ Ձեր մոր սահող մատների սիրո հետագիծը: Մինչև երբ էր սեր հոսում ձեր ափի ակոսներում, չգիտեմ…հիմա այնտեղ հոսքը բոսոր է, վարար և ուժգին, վախենում եմ, կարծում եք կկարողանա՞ք դեմն առնել:

Նա ձեռքերը գրպանը դրեց, մենք միասին քայլեցինք միջանցքի խոնավ պատերի ճնշող ուղեկցությամբ, գիշերային հերթափոխի պահակի հետաքրքրասեր հայացքի ներքո, հետո բացվեցին դարպասներն, և մենք հանձնվեցինք դարպասներից այն կողմ տարածված մթնշաղին: Նրա հայացքը չէր կարողանում կանգ առնել, ազատության մեջ գտվող սովորական առարկաներն ու երևույթները անսովոր կերպով կլանում էին նրա ուշադրությունը:

Գետինը մաքուր էր, գորշ և մոխրագույն՝ առանց սպիտակ ձյան: Օդում սառնություն կար, որ մատնում էր , թե ձմեռ է դեռ: Գլխավերում անտերև ճյուղեր են՝ չորացած և ծեր, հաստ ճյուղերի վրա մանր ոստեր, նույնիսկ փշերի պես բարակ և սուր՝ տարբեր ուղղություններով ածած: Այս խառնիճաղանջությունը կազմում էր մի մեծ ու մանր ցանց, որի մեջ կարծես մաղվում էր երկինքը՝ սպիտակն ու կապույտը իրարից զատելով:

-Մարդկանց մեջ միշտ նուրբ և գեղեցիկ մի բան եմ փորձում տեսնել: Չգիտեմ թե ինչ էիք մտածում երկուստեք համաձայնությամբ լռած այս րոպեներին: Գուցե սպասում էիք, թե երբ է կապույտը տեղը զիջելու բոսորին, կամ թե հայհոյում ձմռանը պատճառած նեղությունների համար:

Նա կնճռոտել էր ճակատը, կկոցել աչքերը, երթուղայինը մոտենում էր, պարզեց ձեռքը: Դաստակի վրա՝ բթամատի ուղղությամբ խաչ էր դաջված:

Երթուղային խցկվեցինք: Հատակից մինչև առաստաղը ձգվում էր երկաթյա ձողը, որը բռնած ձեռքերին միացան նաև մերը, իսկ մյուս ձեռքով կառչեցինք նստարանների թիկնակներից:

Նորից նրա ձեռքին նայեցի. տեսնես ե՞րբ է արել դաջվածքը: Կապտականաչ խաչով ձեռքի կողքին մի ուրիշն էր՝ սպիտակ, կոկիկ ու խնամված՝ այլ ճակատագիր ունեցող ձեռքեր: Ջողին փաթաթված էին ամուսնացած օրիորդի մատներ, իմ ձեռքի վերև՝ կոշտացած, ճաքճքած ձեռք՝ թերևս աշխատավոր մի երիտասարդի, հարգանքի արժանի ծերացած ձեռքեր:

Կրկին կանգնեց, մեկն էլ ներս խցկվեց՝ երեխայի հետ միասին: Երբեմն թվում է անսահման բառը չարժե գործածել ինչ-որ վեհ գոյականի հետ, երթուղայինից անսահման թերևս չկա ոչինչ: Փոքրիկի համար մի կերպ տեղ ճարվեց: Նա

վարդագույն գլխարկ էր դրել, թուշիկներն էլ էին վարդացել սառնությունից, աչուկները կլորացրել և տագնապոտ հայացքը կառչել էր մորից: Ինձ թվաց նա այն է մտածում, ինչ ես նրա տարիքում՝ չլինի՞ իրեն մոռանան երթուղայինում: Նա իր փոքրիկ ու թարմ թաթիկով բռնել էր նստարանի թիկնակից: Ձախ ձեռքում իր նման փամփլիկ արջուկն էր, որին ամուր սեղմել էր իրեն: Նրանց ձեռքերն իրար այնքան մոտ էին: Հետևում էի նրա հայացքին: Անքթիթ նայում էր վարդագույն ձեռքին: Գուցե անծանոթ փոքրիկի ապագայի մասին մտքեր այցելեցին նրան՝ ինչպիսի՞ն կլինի նրա թաթիկների ճակատագիրը, կամ նայելով դրանց՝ խորհում արդեն անցյալ դարձած իր թաթիկների մասին: Չգիտեմ, արդյոք այդ ուղին ավարտված էր համարում:

-Մարդկային էությունը, անկախ ամեն ինչից, ամենաանսպասելի պահին նույնիսկ ընդունակ է թելադրելու իր ձեռքերին գործելու լավը, բարին: Մի բան հաստատ գիտեմ, գիտեմ, որ չգիտեք և իրավունք չունեք որոշելու, թե երբ կլինի վերջաբանը: Նայեք, շատ ձեռքեր կան այստեղ: Արդարության պահանջով է, որ Ձեր ձեռքերն այսօր կառչած են ճաղավանդակից, իսկ սրանք՝այս ձողից: Չեմ կարող ասել, գուցե այստեղ ձեռքեր կան, որ ճիշտ տեղից չեն բռնել:

Ինչ-որ մեկն իջավ, փոքրիկի մայրն առաջ շարժվեց և այժմ կարող էր կանգնել նրա մոտ, ինչը այնքան երջանկացրեց նրան:

…

Քիչ էր մնում հասնելուն: Կանգառում վարորդը անհաջող արգելակեց, և խաղալիքը աղջնակի ձեռքից սահեց ու ընկավ երթուղայինի հատակին: Մինչ փոքրիկը կհասցներ հուզվել իր թանկագին ընկերոջ կորուստի համար, ես տեսա դաջվածքով ձեռքը, որ բարձրացրեց այն ու հանձնեց տիրուհուն: Աղջիկը իր կիսաժպիտ աչքերը բարձրացրեց դեպի նա, հետո նայեց մայրիկին, ով շնորհակալություն հայտնեց անծանոթին, ու թաթիկը դրեց մայրիկի ձեռքին, ու ծածկեց նրա թերևս կեսը միայն:

Մեր՝ իջնելու հերթն էր, իսկ նա մտքերի հեռաստանից նայում էր ձեռքերին: Ես հասկացա նրան:

Դրսում դեռ սառն էր: Փողոցը արդեն երկինքը չէր լուսավորում: Մենք անցանք դիմացի մայթ, որտեղից սկսվող աստիճանները տանում էին կանաչ բլրակի վրա կանգնած փոքրիկ եկեղեցին: Կանաչ բլրակ քաղաքում:

Կանգ առանք մի պահ:

-Երեխաների թաթիկներն գերբնականորեն անքակտելի կապով աղերսված են մոր ձեռքերի հետ: Երբ քնում են, թաթիկով բռնում են մոր մատը, երբ վախենում են թաթիկներն օղակվում են մոր պարանոցին, երբ ինչ-որ բանի կարիք ունեն, թաթիկները ձգվում են դեպի նա, և ընդհանրապես հոգին միշտ սեր է թելադրում, թաթիկները սիրում են աներկբա, անգիտակից գուցեն գիտակիցներին անհաս իմաստով ու խորությամբ…բայց սերն այդ երբեմն ձեռքերի մոտ ընդհատվում է:

Մտանք եկեղեցի: Նկատեցի, թե ինչպես ձեռքը տարավ ճակատը, բայց արագ իջեցրեց՝ խաչ պատկերող շարժումներն անելու համար իրեն անարժան համարելով: Նստեցինք վերջին նստարանին: Լուռ էինք, լսվում էր միայն հալվող ապաշխարանքների, խնդրանքների և շնորհակալությունների մեղմ ճարճատյունը:

Ես նայում էի նեղ պատուհանից ներս ընկած լույսի շերտին, որի մեջ փոշու հատիկները պսպղում էին ու անկանոն շարժվում: Միշտ պատկերացրել էի, որ Տերն էլ ամպերի ճեղքից երկիր ընկած լույս է և պատուհանից ներս ընկած այս շերտն է: Այդ լույսի առաջ ես խոստովանում էի ինձ, որ արգահատանքով եմ լցված մեղք կրող այս մարդակերպի հանդեպ, սիրտս ատելություն էր տածում նրա ձեռքերի հանդեպ: Չէի կարող թաթիկներին գտնել: Ես մեղադրում էի նրան, իր այդպիսի էության համար, որ իմ ատելության օբյեկտ դարձավ, ստիպեց ինձ հեռանալ Բարու շունչը կրող հողակերտ արարածներին սիրելու իմ առաքելությունից:

Հանկարծ նա շշուկով խոսեց.

-Եկեղեցին նման է բանտի: Բանտի սենյակը ունի մի պատուհան, շատ բարձր, այնտեղից միայն երկինքն է երևում, մեկ-մեկ էլ լուսինն է պատահաբար այդտեղով անցնում, ներս է նայում և շտապ հեռանում: Երևի զգում է մեր խավարի մեղսավորությունը: Մարդիկ սիրում են ամեն ինչ ինչ-որ ձևի, կաղապարի մեջ դնել, նրան գույն, մատերիա հաղորդել: Բանտում մենք բանտարկում ենք մեր մարմինները բռնի, հոգին միշտ պատուհանից դուրս է բաղձում: Իսկ հիմա այստեղ հոգիս պատրաստ եմ կամավոր խորանին գամել, մոռանալ դրսում մարմինս:

Ապաշխարանքը հոսում էր աչքերից երեսն ի վար և կաթում մատների արանքներից ներս:

Վախենում եմ իմ ձեռքերի համար: Թաթիկնե՛ր, խնդրում եմ, չլքեք նրանց: